

ՈՒՇԻՒ Ս. ՍԱՐԳԻՍ ՎԱՆՔԻ ՎԻՍԱԿԱՆ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ՖՐԻՆԱ ԲԱԲԱՅԱՆ,
ԱՐԱՄ ՔԱԼԱՆԹԱՐՅԱՆ

Միջնադարյան Հայաստանի նշանավոր հոգևոր և մշակութային կենտրոն Ուշիի վանքը գտնվում է Արաղածոտնի մարզի համանուն գյուղի արևմտյան կողմում, մոտ 300 մ հեռավորության վրա: Համալիրը կառուցվել է ուշ բրոնզ-վաղ երկաթի ժամանակաշրջանի հսկայածավալ ամրոց-բնակավայրի հարավային եզրին, թեք լանջի վրա:

Վանական համալիրի մասին առաջին վկայությունը սլահպանվել է «Ճայմաւաւուրք»-ում՝ կապված Մեսրոպ Մաշտոցի կողմից ս. Սարգսի նշխարները Ուշի տեղափոխելու և վանք հիմնադրելու հետ¹: Միջնադարյան պատմիչների մոտ Ուշիի վանքի և գյուղի մասին վկայությունները վերաբերում են ավելի ուշ շրջանի՝ հատկապես՝ առնչված Ոսկան Երևանցու գործունեությանը, որը վանքի վանահայրն էր 1654-1662 թթ.:

Վանական համալիրի մեջ մտնում են՝ Ս. Սարգսի մատուռ-գամբաբանը (կառուցվել է V-VII դդ., վերանորոգվել՝ XI-XII և գուցե XVII դարերում), գլխավոր եկեղեցին (XIII դ. առաջին տասնամյակում՝ Վաչուտյանների կողմից), գավիթը (կառուցվել է 1264թ.), պարիսպը (կառուցվել է հիմնականում XVII դ.), վանական, բնակելի, տնտեսական, հասարակական և արտադրական շինություններ (XIII-XVII դդ.): Գլխավոր եկեղեցուն և գավիթին արևմտյան կողմում կցված են սյունասրահ (XVII դ.) և քառակուսի հատակագծով մի շինություն (XIII-XIV դդ.):

Վանքը հիմնովին ավերվել է 1827թ. երկրաշարժի ժամանակ (մասամբ պահպանվել են Ս.Սարգիս մատուռը, հատվածաբար՝ գավիթի հարավային կեսը և պարիսպները):

1999 և 2000 թթ. վանքում կատարվել են պեղումներ, որոնք իրականացվել են ՀՀ ԳԱԱ Հնագիտության և ազգագրության ինստիտուտի արշավախմբի կողմից (ղեկ. պ.գ.թ. Ֆրինա Բաբայան)՝ Երևանի պետական համալսարանի աստվածաբանության ֆակուլտետի գեկան՝ Գերաշնորհ Շահե արքեպիսկոպոս Աճեմյանի հովանավորությամբ²:

Աշխատանքների ընթացքում լրիվ պեղվել են մատուռը, եկեղեցու և գավիթի փլատակները, հարավային պարիսպը կից շինություններով, մատուռից հյուսիս գտնվող հատվածի կառույցները և համալիրի մեջ մտնող ճարտարապետական այլ շինություններ: Գտնվել են մեծաքանակ նյութեր՝ հիմնականում խեցեղեն, մասամբ՝ ասլակի, մետաղ, գրամներ և այլն,

1 Յայմաւաւուրք. Կոստանդնուպոլիս, 1706, էջ 490:

2 Հեղինակները ներկայացնելու են աշխատանք «Ուշիի վանքը» վերտառությամբ, որն ամփոփելու է պեղումների արդյունքները, վանքի պատմությունը, մանրակրկիտ վերլուծվելու են ճարտարապետական հուշարձանները և ընդգրկվելու են բոլոր արձանագրությունները (ամբողջական և բեկորային):

որոնք վերաբերում են V–XVII դդ.:

Պեղումների շնորհիվ ի հայտ են եկել արձանագրություններ (մի մասը փորագրված պատերին), որոնք նախկինում հայտնի փոքրաթիվ վիմագրերի հետ միասին աղբյուրագիտական մեծ արժեք են ներկայացնում և առատ նյութ են տալիս վանքի պատմության վերաբերյալ:

Ուշիի վանքի արձանագրություններին առաջին անգամ անգրագարձել է Հովհ. Շահխաթունյանցը: 1827թ. երկրաշարժից անմիջապես հետո այցելելով Ուշի, նա ընդօրինակել և հրատարակել է ավերված գավթի պատերին պահպանված երեք վիմագրեր⁴, որոնք հետագայում տեղ են դրել Ղ.Ալիշանի⁵ և Կ.Կոստանյանցի՝ աշխատություններում:

Վերջերս Ուշիի վանքի արձանագրություններին նվիրված հոդվածով Հանգես է եկել Հնագիտության և աղագրության ինստիտուտի վիմագրության բաժնի աշխատակից Ռուբեն Գասպարյանը, որը նախկին հրատարակումներին ավելացրել է գավթի ևս ութ վիմագիր՝:

Նորահայտ մի քանի տասնյակ արձանագրությունները (մի մասը բեկորային) լրացնում են մեր գիտելիքները Վաչուտյանների իշխանական տան և վանքի պատմության վերաբերյալ: Ստորև ներկայացնում ենք վանքի վիմագրերի մի մասը՝ ըստ բացված հուշարձանների: Ցավոք, պետք է նշել, որ Ս. Սարգիս մատուռի մուտքի բարավորի և արևմտյան ճակատի արձանագրություններն առայժմ չեն ընթերցվում եղծված և հողմահարված լինելու պատճառով: Ուշագրավ փաստացի տվյալներ կարող է պարունակել բարավորի վրայի 8 տողանի ընդարձակ վիմագիրը, որի սկզբում հստակ կարդացվում է ՌԾԲ թվականը (1203թ.): Այն առայժմ Ուշիից մեզ հայտնի արձանագրություններից ամենահինն է:



Նկ. 1

3 Ստորագրություն կաթողիկէ էջմիածնի և հինգ գաւառացն Արարատայ, աշխատասիրութեամբ Յովհաննու եպիսկոպոսի Շահխաթունեանցի. Հ. Բ, էջմիածին, 1842, էջ 118–120:

4 Հ. Շահխաթունյանցը իրականում հրատարակել է երկու արձանագրություն: Այդ մասին տե՛ս հետագա շարադրանքում:

5 Ղ. Ալիշան. Վեներտիկ, 1890, էջ 181:

6 Կ. Կոստանյանց. Վիմական տարեգիր. Ս. Պետերբուրգ, 1913, էջ 107, 164:

7 Ռ. Գասպարյան. Ուշիի Ս.Սարգիս վանքի վիմական արձանագրությունները. – «Լրաբեր հաս. գիտ.», 1993, № 1, էջ 130–136:

Արձանագրությամբ վերստին հաստատվում է Վաչեի «կողմնակալութ-
յան» (վիմագրում՝ ԿՈՂՄԱԿԱԼ) իրավունքը, որ նա ստացել էր Ջաքար-
յաններից: Վաչուտյանների «կողմնակալության», «վերակացության»
խնդիրը մանրամասն քննարկված է⁹, և մենք չենք անդրադառնա դրան:
Պետք է նշել, որ Ջաքարյանների կողմից Հայոց աշխարհի մի մասի ազա-
տագրումից հետո, երկրի կառավարումը հանձնվել է իշխանական տների
ներկայացուցիչներին՝ վերջիններիս մատուցած ծառայությունների դի-
մաց: Պատմիչների մոտ և վիմագրերում հիշատակություններ են պահ-
պանվել՝ Վաչուտյաններից բացի Օրբելյանների և Խաղբակյանների կողմ-
նակալ լինելու մասին¹⁰: Աղբյուրներից երևում է, որ գավառի (և ընդհան-
րապես իրենց ազատագրած տարածքների) սեփականատեր հանդես են եկել
Ջաքարյանները, իսկ կողմնակալները օգտվել են միայն ժառանգական տի-
րության իրավունքով, տնօրինել են, կատարել նվիրատվություններ և
գնումներ: Համենայն դեպս այդ վիճակը շարունակվել է մինչև XIII դ.
երկրորդ կեսը: Կողմնակալությունը վարչական և ռազմական պաշտոն էր:
Ջաքարյանների թողած գրեթե բոլոր արձանագրություններում (մինչև
Ջաքարեի մահը՝ 1212թ.), Ջաքարեն և իվանեն հանդես են գալիս միասին:
Սա կարևոր փաստ է այն առումով, որ իրենց իշխանության սկզբնական
չրջանում, նրանք, հավանաբար, հավասար իրավունքներ են ունեցել երկ-
րի ազատագրված բոլոր տարածքներում: Հովհաննավանքում Վաչեի
1217թ. արձանագրությունում ուղղակի նշված է. «... գաւառս Արարատու
ի ձեռն երկուց եղբարց...»¹¹: Եվ եթե մեր քննարկած արձանագրության
երկրորդ տողի վերականգնումը ընդունելի է՝ ՀՐԱՄԱՆԱԻ ԻՒԻԱՆԷԻ ԵԻ
ՋԱՔԱՐԷԻ...¹², ապա կողմնակալության պաշտոնը Վաչեին նրանք երկու-
սով են շնորհել: Մյուս կողմից՝ արձանագրությունը փորագրելու ժամա-
նակ, Վաչեն արդեն ուներ այդ պաշտոնը: Վաչեն, հավանաբար, կողմնա-
կալ է նշանակվել Ամբերդ ամրոցի ազատագրումից հետո հաջորդող տարի-
ներին, գուցե մինչև 1203թ.: Ինչ վերաբերում է Ուշիի մեծ եկեղեցու շինա-
րարությունը, ապա այն, ըստ մեզ, պետք է տեղի ունենար 1203-1210թթ.:
Հետաքրքիր է նկատել, որ Վաչեն իր թողած բոլոր արձանագրություննե-
րում (Հաղբատ¹³, Թեղենյաց վանք¹⁴, Կեչառիս¹⁵, Սաղմոսավանք¹⁶, Հառիճ¹⁷,

9 Տե՛ս Վ. Պետրոսյանց. Վաչուտյան իշխանական տան տոհմաձագր. – «Բանբեր
Երևանի համալսարանի», 1981, №3, Հ.Մարգարեան. Վաչուտեանների իշխանական
տան պատմությունից, Շողակաթ. Ստանպոլ, 1995, էջ 29-54 և հղումները:

10 Դիվան հայ վիմագրության, պրակ III, Եղեղնաձորի և Ագիգբեկովի շրջաններ,
կազմեց Ս. Գ. Բարխուդարյան. Երևան, 1967, էջ 123, 127, Ստեփանոս Օրբելեան.
Պատմութիւն տանն Սիսական. Թիֆլիս, 1910, էջ 397:

11 Կ.Ղ ա Ֆ ա գ ա ը յ ա ն. Հովհաննավանքը և նրա արձանագրությունները.
Երևան, 1948, էջ 82, արձ. 15:

12 Նման հերթականությունը բազմիցս հիշատակվում է վիմագրերում: Տե՛ս Դիվան
հայ վիմագրության, պրակ IV, Գեղարքունիք, Կամոյի, Մարտունու և Վարդենիսի շրջան-
ներ, կազմեց Ս. Գ. Բարխուդարյան. Երևան, 1973, էջ 32, 38, արձ. 32, 63:

13 Կ. Ղ ա Ֆ ա գ ա ը յ ա ն. Հաղբատ. Երևան, 1963, էջ 172-174:

14 Այդ մասին մեզ հայտնի է վիմագրագետ Գ. Սարգսյանի:

15 Հ. Շ ա հ խ ա թ ու լ յ ա ն ց. նշվ. աշխ., էջ 192:


16 Նույն տեղում, էջ 122:

17 Նույն տեղում, էջ 264:

Հովհաննավանք¹⁸) Հանդես է գալիս իր կնոջ՝ Մամախաթունի Հետ միասին (րացառություն է Մակարավանքի՝ 1215–1217թթ. համարվող վիճակագրության)¹⁹: Այս շարքի ամենավաղ հիշատակությունները Սանահինի և Թեղենյաց վանքի գավթի 1211 թ. վիճագրերն են: Ուշիում Վաչեն մենակ է²⁰ և, բնականաբար, կարող էր դեռ ամուսնացած չլինել: Ելնելով այս փաստերից, պետք է ենթադրել, որ Վաչեն Մամախաթունին կնուխյան է վերցրել հավանաբար 1205–1206 թթ.: Իսկ արձանագրությունը թողել է եկեղեցու շինարարության ավարտից անմիջապես հետո, որը կարող էր նույն տարիներին լինել:

Վաչեի վիճագրում հիշատակվում է Ծառզարդարի տոնին պատարագ Հաստատելու մասին: Հետաքրքիր է, որ Վաչեի և Մամախաթունի արձանագրություններում պատարագները հատկացված են՝ Վաչեին՝ երեք անգամ Ծառզարդարի տոնին, Մամախաթունին՝ երեք անգամ ս. Ղազարի տոնին²¹ և միայն մեկ անգամ՝ Մամախաթունի Տեղերի վանքում թողած 1232 թ. վիճագրում իրեն և արդեն մահացած Վաչեին՝ Վարադա ս. Խաչի տոնին: Այն հանգամանքը, որ Վաչուտյանների հետագա սերունդների թողած վկայագրերում չկան այս տոների անունները, խոսում է այն մասին, որ Վաչեն և Մամախաթունը դրանց հատուկ նշանակություն են տվել. Ծառզարդարը տոնվել է Ջատկից յոթ օր առաջ, ս. Ղազարի հարուխյան հիշատակը՝ ութ օր առաջ:

Երկրորդ արձանագրությունը փորագրված է եկեղեցու ավազ խորանի բեմառէջքի քանդակազարդ ճակատի վերին մասը եղրափակող, նույնպես քանդակազարդ, ձևավոր քարերի վրա ելնդավոր տառերով (նկ. 2, գրչապիղ 2): Բեմառէջքի այդ քարերը հայտնաբերվել են տարբեր տեղերում:



Նկ. 2

18 Կ. Ղ ա Ֆ ա գ ա Ր յ ա ն. Հովհաննավանքը և նրա արձանագրությունները, էջ 82:


19 Դիվան հայ վիճագրության, սրակ IV, էջ 186-187: Հաղրատում մի խաչքարի վրա փորագրված է Վաչեի 1201 թ. արձանագրությունը իր գալստյան առիթով: Տես Կ. Ղ ա Ֆ ա գ ա Ր յ ա ն. Հաղթատ, էջ 214, արձ. 98:

20 1201 թ. Վաչեն այցելել է Հաղթատ և արձանագրություն է թողել մի խաչքարի վրա: Այստեղ ևս նա մենակ է և հնարավոր է արդեն կողմնակալ էր: Տես Կ. Ղ ա Ֆ ա գ ա Ր յ ա ն, Հաղթատ, էջ 214, արձ. 54:

21 Կեչառիսի 1213, Հառիճի 1221, Հովհաննավանքի 1217, Մակարավանքի 1215–1217թթ. արձանագրությունները: Նույն Ծառզարդարի տոնին պատարագ են սահմանել Վաչեի հոր Սարգսի համար: Տես Կ. Ղ ա Ֆ ա գ ա Ր յ ա ն. Սանահինի վանքը և նրա արձանագրությունները. Երևան, 1957, էջ 133, արձ. 54:

Երկրաչարժի ժամանակ դրանք պոկվել են տեղից և խիստ վնասվել: Պակասում է 6 քարերից մեկը, թվով երկրորդը: Չնայած վիմագիրը խաթարված է, այդուհանդերձ կարդացվում է, և մեր վերծանությունը ունի հետևյալ բովանդակությունը.

✠ ՊԵՏՐՈՍ..... ՎԱՐԴ ԱՅՊԵՏ ՄՐԻՈՅ ԽՈՐԱՆ ԽՍ ՅԻՇԵՑԵՔ ԻԻ ԲՍ:



Գրչագիր 2


Մեր ընթերցմամբ՝ Պետրոսը պետք է լինի վանքի վարդապետը. վերականգնվում է երկրորդ պակասող քարի և երրորդ քարի վրայի վիմագիրը՝ ՎԱՐԴ ԱՅՊԵՏ, գուցե ՐԱԲՈՒՆ ԱՅՊԵՏ: Յ հնչյունի օգտագործումը արձանագրություններում առհասարակ ընդունված էր, և Ուշիում էլ այն հանդիպում է տարբեր ձևերով՝ ՋՈՐԱՅՎԱՐ, ՄԻԱՅԲԱՆ, ՋԱՆԿԱԿԱՅՏՈՒՆ և այլն: Վիմագրի ժամանակագրումը գյուրին չէ: Համենայն դեպս այն գրվել է եկեղեցու կառուցումից հետո: Ճարտարապետական որոշ մանրամասներ հուշում են, որ բեմառէջքը հետագայում է շինվել: Ուշիում Պետրոս անունով վարդապետ-բաբունապետ հիշատակվում է 1310թ.²²: Ենթագրել, որ խոսքը հիշյալ Պետրոս վարդապետին է վերաբերում, նշանակում է բեմառէջքի քանդակները և արձանագրությունները թվագրել XIV դ. սկզբներով: Սակայն, հիշատակարանում գրիչն այդ ժամանակաշրջանի վերաբերյալ դրում է, թե «...Բազում գեղք և վանորայք աւէր և անհանդիստ, և քահանայք տարաշխարհիկ լինին...»²³, որ բացառում է այդ ժամանակ որևէ աշխատանք կատարելը: Մյուս կողմից, Ուշիի Սուրբ Սարգիս գորավարի վանքին այդ ավետարանը (ընդօրինակվել է Հովհաննավանքում) նվիրում է Մամախաթունը, որը դուստրն էր Սուպայի և Տիկնանցի, քույրը՝ Հազարբեկի, Ամիրի, կինը՝ ազգով վրացի Ջաջուռի²⁴: Հիշատակարանը հետաքրքիր է նաև այն առումով, որ Տիկնանց, Հազարբեկ և Ամիր անունները հանդիպում են նաև Ուշիի տարբեր վիմագրերում: Հնարավոր է, որ Մամախաթունը Վաչուտյանների սերնդից է: Բոլոր դեպքերում հարցը վիմագրական պրպտումների կարիք ունի:

Երրորդ արձանագրությունը գետեղված է եկեղեցու հյուսիսային պատի աջ անկյունում՝ հյուսիսային ավանդատան մուտքից ձախ: Վիմագիրը յոթ տող է (նկ. 3, գրչագիր 3): Անհասկանալի է, թե ինչու արձանագրությունը կեսից է սկսվում: Բուն արձանագրության քարերը և կից վեմերը վերաշարված չեն և նախնական են: Վիմագիրն իր բովանդակությամբ և

22 Ժ. Դ. դարի հայերեն ձեռագրերի հիշատակարաններ, կազմեց Լ. Խաչիկյան. Երևան, 1950, էջ 65-66:

23 Նույն տեղում:

24 Նույն տեղում:



Նկ. 3

Ե Ի Տ Վ Ի Մ
 Ն Տ Ո Ի Ն Ծ
 Ի Ն Ա Կ Ա Ն
 Ո Ի Բ Դ Ե Յ
 Ի Հ Ի Ի Ս Ն
 Ո Ի Մ Ե Կ Ն Ո
 Բ Դ Ե Յ Ո Վ

Գրչադիր 3

տառատեսակներով չի կապվում այլ վիճագրերի հետ, հետևաբար այն մենք հաշվում ենք առանձին միավոր: Արձանագրության վերձանությունն է.

1. Ե Ի Տ Վ Ի Մ Ի-
2. Ն Տ Ո Ի Ն Ծ-
3. Ի Ն Ա Կ Ա Ն,
4. Ո Ի Բ Դ Ե Յ-
5. Ի Հ Ի Ի Ս Ն
6. Ո Ի Մ Ե Կ Ն Ո-
7. Բ Դ Ե Յ Ո Վ:

Միջնադարյան վիճագրերում բազմաթիվ հիշատակություններ կան շինականների նվիրատվության մասին: Այս խնդիրը բավական համոզիչ ներկայացված է Ս. Ավադյանի կողմից²⁵: Մեր վիճագրերը շատ կարևոր լրացում է հիշյալ հարցի քննարկման համար: Դադի վանքի մի արձանագրությունում հիշատակված է. «Դ: տուն շինական»: Ուշիի արձանագրության մեջ «Ո Ի Բ Դ Ե Յ Ի Հ Ի Ի Ս Ն» բառակապակցությունը պետք է հասկանալ տեղի իմաստով: Ուրեմն տրվել է մեկ տուն շինական, Ուրգեցի հյուան Ումեկին որգիներով: «Ուրգի», «Ուրգա» տեղանվան վերաբերյալ կան պահպանված որոշ տվյալներ: Նախ, «Գիրք թղթոցում» հիշատակվում է «Կոզմաս Ուրգայ»²⁶: Հաղբատի 1273թ. իսաչելության իսաչքարի արձանագրության մեջ հիշվում է «Ուրգածորո Ս. Նշան»²⁷: Գ. Հովսեփյանը Ուրգան տեղադրում է Աշտարակի շրջանում, Ուշիից ոչ հեռու գտնվող Իլան-չալան (ներկայիս՝ Արտաշավան) գյուղի տարածքում²⁸, որը կասկածի տակ է

25. Ս. Ա. Ա վ ա գ յ ա ն. Վիճական արձանագրությունների բառաքննություն. Երևան, 1987, էջ 246-250:


26. Գիրք թղթոց. Թիֆլիս, 1901, էջ 151:

27. Կ. Ղ ա Ֆ ա դ ա Ր յ ա ն. Հաղբատ, էջ 194:

28. Գ. Հ ո վ ս ե փ յ ա ն. Նյութեր և ուսումնասիրություններ. պրակ Գ, Նյութ-Յորք, 1944, էջ 20:

վերցնում Ա. Շահինյանը²⁹: Ուշիի արձանագրության մեջ անդանվան հիշատակությունը ավելի համոզիչ է դարձնում Գ. Հովսեփյանի վարկածը Ուրդիի տեղադրության վերաբերյալ: Պետք է ուղղակի ավելացնել, որ նման նվիրաբերություն կարող էին անել Վաչուտյանները:

Հաջորդ արձանագրությունը հյուսիսային ավանդատան մուտքի վերևի մասում է փորագրված, թերի է, պահպանված է 8 տող (նկ. 4, գրչագիր 4):



Նկ. 4

ԱԼԱ
 ԻՍԱՂԱԶՍ ԻՂԱՍԱԻՍ
 ԿԱՍԱԵԼՉՅԻՇԱՍԱԿՍԵՐԱ
 ՆԻԱՓՆԱՌԱՔԻՉԵՆԼՈՅՆՔԻ
 ԷՌԷՈ Ա ԼԻԱՆԱՉԻՇԱ
 ՍԿԱՄԵՐԵՐՈՑԿԱՅՅԵՍԱԱՑ
 ՅԵ ԿՈՅՆԶՈՎԵԼ
 ԼԵՑԻՆԷ

Գրչագիր 4

²⁹ Ա. Շահինյան. Օձունի կառուցման ժամանակի մասին. — «Պատմա-բանասիրական հանդես», 1974, № 4, էջ 126:

Ցավոք, արձանագրության սկզբնահատվածը խաթարվել և ոչնչացել է երկրաշարժի ժամանակ և մեզ հայտնի չէ, թե ով ինչ ծառայության համար է պատարագ ստացել: Բերում ենք վերծանությունը:

1. ԱԼԱ
2. ԻՍ ԱՂԱԻԹՍ ... Ի ՊԱՏԱՐԱԳՍ
3. ԿԱՏԱՐԵԼ ԶՅԻՇԱՏԱԿՍ ՄԵՐ Ա -
4. ՆԽԱՓԱՆ ԱՌԱՋ Ի ԶԷՆԼՈՅՆ ՔԻ .
5. ԷԹԷ ՈՐՔ ԽԱՓԱՆԵՆԵՂ ԶԱՆԱ ԶԻՇԱ -
6. ՏԱԿ ՄԱԻՐ Ի ՄԵՐՈՑ ԿԱՄ Ի ՅԱԻՏԱՐԱՑ
7. ՅԵՐԻՑ ՍԲ ԺՈՂՈՂՎՈՅՆ ՆԶՈՎԵԼ
8. ԼԻՑԻ. ԱՄԷՆ:

Ընդարձակ արձանագրություն է փորագրված եղել ներքուստ՝ եկեղեցու հարավային շքամուտքի ձախ կողմում: Արձանագրության սկիզբը (1 տող) բացակայում է, ձախ մասը խաթարված է: Պահպանվել է 9 տող (նկ. 5, գրչազիր 5):



նկ. 5

ԻՆ ԸՈՒՌՆՍԻ ԸԱՅԵ Ա ՈՒՍԵ
 ԲԱԵ ՅԱԳ ՄՐՁԱՐԱՅՎԱԾՈՐԻ
 ՅԱՌԱՔԻՆ ԶԱՅԱԵՐԿԱՔԻՆ ԵԱՅԻ
 ԵՅԵՏՆՈՅԱՅԵԳՎԱՏԱՏԵ ՅԵԷ
 ԸՄԵ ՏԿԱԳԱՅԻՓԱ ॥
 ԻՌԻՂԱՆՂԵՅԻՈ ԱՅԱԴԻՆԱԱԴԻԵԼԵՄԱՅԲԱՆՔՍ
 ՀԱՄԱՄԵՅԻՆԵՆՆ ԴԱՐՊԱՄԱԳԻՆԱՆԻԿԻ
 ԳՈՒԲԱՏԱՆԱՅԻ: ԻՂՈՒԹԵԿԱՄԱ ԻՉԳԱԻՆԵ
 :ՉԾԲ:

Գրչազիր 5

Բերում ենք տեքստի վերծանությունը:

1. [ԿԱՄԱԻՆ ԱՆՄԱՀԻՆ ԱՅ ԵՒ ՈՂՈՐՄՈՒԹ ՊԱՐՈՆ ՔՐԴԻՆ, ԵՍ ՍԱՀԱԿ, ՈՐԴԻ]...
2. ԻՆ, ԹՈՌՆ ՍԻԹԱՅ ԵՒ ԱՄՈՒՍԻՆ [ԻՄ ԽԱԹՈՒԹՆ ՄԻԱ]
3. ԲԱՆԵՑԱՔ ՄԲ ԶԱԻՐԱՅՎԱՐԻՍ ՈՉ ՈՐԻ].....
4. ՅԱՌԱՋ ՔԱՆ ԶԱՅՍ ՄԵՐ ՀԱՐՔԻ ՄԻԱՅԲԱՆ ԵԿԻՆ].....
5. ԵՒ ՅԵՏ ՆՈՑԱ ՄԵՔ ՀԱՍՏԱՏԵՑԱՔ Զ.....
6. ԹԻՍ ԵՒ ՏՎԱՔ ԱՅԳԻ ՓԱՐ[ՊԻ].....
7. ԽՈՒՊԱՆ ՏՆԳԵՑԻ ՈՒ ԱՅԼ ԱՐԴԻԻՆՍ ԱՐԱՐԻ ԵՒ ՄԻԱՅԲԱՆՔՍ
8. ՀԱՍՏԱՏԵՑԻՆ ԱՄԵՆ ԱՄԻ: Դ: ԱԻՐ ՊԱՏԱՐԱԳ Ի ՏԱԻՆԻ ՄԲ Գ[ՐԻ]-
9. ԳՈՐ: Բ:ՍԱՀԱԿԱՅ: Բ: ԽԱԹՈՒԹԻՆ: ԿԱՏԱՐԻՉՔ ԱԻՐՀՆԻՆ ՅԱՅ :
10. ՉԾԲ (1303):

Սիթի-Սիթա իգական անձնանունը տարածված է եղել միջնադարում³⁰: Նվիրատվական բնույթի այս արձանագրությունը թողած անձինք, ըստ երևույթին, Վաչուտյանների մերձավորներից են, այլապես հատուկ չէր շեշտվի, որ Սահակը Սիթի թոռն է: Վիժազիբը պատվիրվել է Տայիրի որդի Քրգի իշխանության ժամանակ՝ 1303թ.: Հավանաբար՝ արձանագրության առաջին տողը կարելի է վերականգնել հետևյալ կերպ. «Կամալն անմահին ԱՅ և ողորմութեամբ պարոն Քրգին³¹ ես Սահակ որդի», երկրորդ տողը՝ «ին թոռն Սիթայ և ամուսին իմ Խաթուլթ միա»...: Խաթուլթ անձնանունը հազվադեպ է հանդիպում վիժազրերում: Մեղ հայտնի է միայն Հաղարծնի գավթի և Ս. Աստվածածին եկեղեցու հիշատակագրերում³²:

Թեև արձանագրությունը թերի է, այգուհանգերձ հետաքրքիր է այն իմաստով, որ պատվիրատուները նախորդ շրջանից եկող ինչ-որ գործարք են հաստատում: Նման ըրվանգակությունը վիժազրեր բազմիցս հանդիպում են:


Արձանագրությունների մի իուլմբ գտնվել է եկեղեցու արևմտյան հատվածի մաքրման աշխատանքների ժամանակ: Դրանց մի մասը, անշուշտ, մեծ եկեղեցու արևմտյան պատի արտաքին երեսին է փորագրվել, իսկ մի մասը՝ արտաքին սրահի և մեր կողմից «զանգակատուն» անվանված քառակուսի փոքր շինությունից վրա:

Այդ վիժազրերից առանձնանում է մեկը, որը կարևոր հիշատակություններ ունի Ուշիի վանքի և վերջինիս աջակցող անձերի վերաբերյալ:


Արձանագրությունը փորագրված է եղել 7 քարի վրա (7 տող), որոնք

30 Ս. Ա. Ավագյան. նշվ. աշխ., էջ 291-292:
 31 Նույն բառակապակցությունը, ինչպես գավթի հարավային պատի 1329թ. արձանագրությունը: Տե՛ս ստորև:
 32 Դիվան Հայ վիժազրության, պրակ VI, իջևանի շրջան, կազմ. Ս. Ա. Ավագյան, Հո. Մ. Զանփոլագյան. Երևան, 1977, էջ 42,51, արձ. 72, 100:

Հայտնաբերվել են գավթի արևմտյան շքամուտքից ձախ՝ եկեղեցուն և գավթին կից քառակուսի փոքր շինությունից հարավային հատվածի մաքրման ժամանակ: Ըստ երևույթին այն փորագրված է եղել շինությունից հարավային պատին, որը փուլ է եկել գեպի հարավ (նկ. 6, գրչագիր 6):



նկ. 6



Գրչագիր 6

Միացնելով տարբեր քարերի վրա եղած հատվածները և լրացնելով թերի տեքստը, մեր ընթերցմամբ վիճաբանը կարողացվում է հետևյալ կերպ.

1. ՅՈՒՍՈՎ ԱՆՄԱՀԻՆ ԱՅ : ԵՒ ՈՂՈՐՄՈՒԹԵԱՄԲ ՆՈՐԻՆ
[ՔՐԴԻՆ ԵՍ ՍՈՒՊԱ]
2. ՈՐԴԻ ԶՈՒՐՁԻՆ: ՄԻԱՅԲԱՆԵՑԱՅ ՄԲ՝ ԶԱԻՐԱՎԱ [ՐԻՍ ԵՒ
ՇԻՆԵ]
3. ՑԻ ԶԱՆԿԱԿԱՅՏՈՒՆՍ Ի ՀԱԼԱԼ ՅԸՆՁԻՑ ԻՄՈՑ Վ [ԱՍՆ
ՓՐԿՈՒԹԵԱՆ ՀՈԳ]
4. ՈՅ ԻՄՈՑ ԵՒ ՅԱՐԵԻՇԱՏՈՒԹԵԱՆ ՊԱՐՈՆ ՔՐԴԻՆ [ԵՒ ԻՄ
ՈՐԴ] ԵՑ –
5. Ն ՀԱԶԱՐՊԷԿԻՆ ԵՒ ԱՄԻՐԻՆ ԵՒ ՍՊԱՍԱՒՈՐՔ ՍՈՐԱ ԷՏՈՒՆ
ՅԱՄԷՆ [ԱՄԻԲ:
6. ԱՒՐ ՊԱՏԱՐԱԳ:Ա:ՅԱՅՏԵՆՈՒԹԵԱՆ ԵՒ:Ա: ԶԱՏԿԻՆ: ԿԱՏԱ
[ՐԻ] ԶՔՆ ԱԻՐՀ [ՆԻՆ ՅԱՅ]:
7. Ի ԹՎԻՍ ՉԿ: (1311թ.):

Արձանագրության մեջ հիշատակվող Հազարպեկը և Ամիրը Մամախաթունի եղբայրներն են: Նրանք վկայված են Մամախաթունի 1310թ. պատվիրած ավետարանի հիշատակարանում³³: Վիճաբանում չի վերականգնվում Ջուրջիի որդու անունը, որն իր հալալ արդյունքով շինել է զանգակատունը: Նա չի կարող լինել Մամախաթունի մյուս եղբայրը՝ Կուկորը, քանի որ նրանց ծնողներն էին Սուլայան և Տիկնանցը: Կարելի է ենթադրել, որ զանգակատունը կառուցել է Մամախաթունի հայրը՝ Սուլայան՝ Քրդի և իր որդիների արևշատության համար: Նա, հավանաբար, Վաչուտյանների հետ ազգակցական կապեր է ունեցել կնոջ միջոցով և այդ կապակցությամբ հիշատակում է նաև Հազարպեկին ու Ամիրին: Որքան մեզ հայտնի է, «Ջուրջի» անձնանունը հիշատակվում է միայն Վայոց Ձորի Նորավանքի Ս.Կարապետ եկեղեցու մի վիճաբանում³⁴ (երկու տարբեր Ջուրջիներ), որը ժամանակով համապատասխանում է Ուշիի արձանագրությանը: Հնարավոր է, որ այս երկու սրբավայրերում հիշատակված Ջուրջիները նույնացվեն, քանի որ Նորավանքի արձանագրությունում պատարագ է սահմանվել նաև Տիկնանցին, Հասանին, այսինքն՝ անձնանուններ, որոնք հիշվում են Ուշիի վիճաբանում:

Ըստ երևույթին Սուլայայի և Տիկնանցի հետ է կապվում նաև մեկ այլ արձանագրություն, որը թերի է, պահպանվել է հինգ տող երկու քարերի վրա (նկ. 7, գրչագիր 7):

Վիճաբանի տրամաբանական միտքը՝ տառերի քանակական վերլուծությունը, մեզ հանգեցնում է հետևյալ վերծանության.

1. ԿԱՄԱԻՆ [ԱՅ ԵՍ ՍՈՒՊԱ] ԵՒ ԱՄՈՒՍ-
2. ԻՆ ԻՄ ՏԻ [ԿՆԱՆՑ ՏԻԿԻՆ ՄԻԱԲ-
3. ԱՆԵՑԱՔ [ՄԲ ԶԱԻՐ] ԱՎԱՐԻՍ ԵՒ
4. ՆԿԱՐԵՑԱ [Ք ԱԻԱԳ] ԽՈՐԱՆՍ

33 Ժ. Գարի հայերեն ձեռագրերի հիշատակարաններ, էջ 65:
34 Դիվան հայ վիճաբանության, պրակ III, էջ 214:



Նկ. 7

ԿԱՄԵՆՍ
ԻՆԻՄՏԻ
ԱՆԵՑԱ
ԿԱՄԵՑԻ

ԵԱՌԻՍ
ԻԿԻՆՄԱԲ
ՂԱՎԱՐԻՍԵ
ԽՈՒԱՆՍ

Գրչագիր 7

Մեծ եկեղեցու Ավագ խորանը, որից պահպանվել են միայն ստորին շարքերը, ամբողջովին պատած է եղել որմնանկարներով: Նույնիսկ XVII դ. (1657 թ.) Ուշիում գրված ձեռագրերից մեկի հիշատակարանում տաճարը դիտվում է «սրբէածեմ և քրորեագարգ»³⁵: Հիմնավոր պետք է համարել, որ զանգակատուն կառուցողը այն երևելի անձնավորություններից էր, որը պատվիրել է նաև խորանի նկարազարդումը: Սխալ չէր լինի կարծել, որ այդ ժամանակ էլ (XIV դ. սկիզբ) տեղի է ունեցել եկեղեցու գմբեթակիր զույգ որմնասյուների հզորացումը, ինչպես նաև բեմառէջքի ձևավորումը (Պետրոս վարդապետ - րաբունապետի ջանքերով):

Մեծ եկեղեցու արևմտյան հատվածում արտաքին սյունասրահի և զանգակատան փլատակները մաքրելիս, գտնվել են արձանագրված և խաչաքանդակ շինաքարեր, որոնց վրա հիշատակվում են մի քանի անուններ

³⁵ Հայերեն ձեռագրերի ժէ դարի հիշատակարաններ, հ. Գ, էջ 750:

ՍԱՐԳԻՍ, ԽՈՒՏԼԱՓ, ԱՄԻՐ, ՆԱՍԽԱԹՈՒՆ, ԷՀԱՆԷՍ, ԽՈՒԹՎԵՐ, ԱՂԲԵ-
ՐԻԿ, ԽԱԹՈՒՆ, ՍԱՐԿԱԻԱԳ, ԱԶ և այլն (նկ. 8): Այս անունների խումբը
պահպանվել է չորս քարի վրա, գրվել է նույն գրիչի ձեռքով, ասոսան-
սակները նույնն են և, հավանաբար, ժամանակը՝ նույնպես: Երկու խաչա-
քանդակ քարի վրա կան ՇԱՄԱՄ, ԽԱԹՈՒՆ անունները:



ՉՍԱՐԳԻՆՍԵ ՉԽՈՒՐԱՓ
ՆԵՉԱԻՐՆԷ ՉՆԱՍԽԱԹ
ՈՒՆՆ: ՅԱԼԱԻԹԳԵՇԵՅԵԲ

ՉԷՀԱՆԷՍԵՉ
ԽՈՒԹՎԵՐՍՅԱ
ՂԱԻԹԳԵՇԵՅ
ԵՅ ԷԲ



ՉԱ
ԻԲ

ՉԷ



ՉԱ
Ի
ՉԷ
Ե



ՉԱՂԲԵՐ
ԻԿՆԵՉԻ
ԱԹՈՒՆ
ՅԱԼԱԹ
ԵՇԵՅԵ



ՉՍԱՐԿԱԻԱԳՆ
ԵՉԱՉՆՅԱՂ
ԱԹԵՅԵՇԵՅ
ԷԲ

նկ. 8

Եկեղեցու արևմտյան կամարասրահի մաքրման ժամանակ գտնված ար-
ձանագիր քարերի մեջ ուշադրության են արժանի Ուշիի վանքի վերջին
ժամանակաշրջանի պատմության հետ առնչվող վկայությունները: Դրան-
ցից մեկը փորագրվել է 8 քարի վրա (7 տող) (նկ. 9, գրչագիր 8):



Նկ. 9

ՇՆՈՐՕՔԵՆՈՂՈՐՄՈՒԹԹ ԵՄԵՆԱԿԱԼԻՆ ԱՅ ԵԱ ՄԻՆԱՍ
ՎԼԱՂԱՂԱՂԵՏՍ ԱՌԱՋԵՆՈՐԴ ԱՐԲՈՅՆ ԱԱՐԳԻՍԻ
ՋՈՐԱԻԱՐԻՆ, ԲԼԱԼ
ՁՂՈՒՄ ՋԱՆԻԻ ԵՒ ԱՇԽԱՏՈՒԹԹ ՅՈՒՇԱԿԱՆԱՅ ԱՅԳԻՆ
ԲԼԱՂՂՈՒՄ ՕԺԻՏ ԵՒ ՊԱՐԳԵՒՍ ՏԱԼՈՎ ՏԻՐՈՋԵՆ,
ԱԻԱՆԴԵՑԻ
ՄԲ ՎԱՆՔՍ: ՈՎ ՈՔ ՈՐ ԱՅԳՈՒ ՏԻՐՈՋԻՑԵՆ ՈՐԴՈՑ
ԵՒ ԹՈՒԱՅ ԱԲՇՏԱԿԵԼ ԿԱՐԻ Ի ԿԱԵՆԻ ՊԱՏԻԺՆ
ԵՒ ՅՈՒԴԱՅԻ ՄԱՍՆԱԿԻՑ Է: ԱՄԵՆ: ԹՎԻՆ ՌՃԽ-ԻՆ (1691):

Գրչագիր 8

Արձանագրությունը վերծանվում է.

1. ՇՆՈՐՕՔ ԵՒ ՈՂՈՐՄՈՒԹԹ ԱՄԵՆԱԿԱԼԻՆ ԱՅ ԵԱ ՄԻՆԱՍ
2. ՎԼԱՂԱՂԱՂԵՏՍ ԱՌԱՋԵՆՈՐԴ ԱՐԲՈՅՆ ԱԱՐԳԻՍԻ
ՋՈՐԱԻԱՐԻՆ, ԲԼԱԼ
3. ՁՂՈՒՄ ՋԱՆԻԻ ԵՒ ԱՇԽԱՏՈՒԹԹ ՅՈՒՇԱԿԱՆԱՅ ԱՅԳԻՆ
4. ԲԼԱՂՂՈՒՄ ՕԺԻՏ ԵՒ ՊԱՐԳԵՒՍ ՏԱԼՈՎ ՏԻՐՈՋԵՆ,
ԱԻԱՆԴԵՑԻ
5. ՄԲ ՎԱՆՔՍ: ՈՎ ՈՔ ՈՐ ԱՅԳՈՒ ՏԻՐՈՋԻՑԵՆ ՈՐԴՈՑ
6. ԵՒ ԹՈՒԱՅ ԱԲՇՏԱԿԵԼ ԿԱՐԻ Ի ԿԱԵՆԻ ՊԱՏԻԺՆ
7. ԵՒ ՅՈՒԴԱՅԻ ՄԱՍՆԱԿԻՑ Է: ԱՄԵՆ: ԹՎԻՆ ՌՃԽ-ԻՆ (1691):

Տվյալ գեպքում 1670-ական թվականներից Մինաս անունով հոգևորական հիշատակվում է երկու անգամ: Մեկը Մուղնիում՝ Ա. Գևորգ եկեղեցու 1670թ. խաչաքանդակներից մեկի վրա շրջանակված վիճագրում (Մինաս

սարկավագ)³⁷, իսկ մյուսը վկայված է Սիմեոն Երևանցու մոտ՝ Մինաս վարդապետ՝ «Աթոռակալ սրբոյ Աթոռոյս»³⁸: Վերջինս 1674 և 1676 թթ. Օշականում այգիներ է գնում: Պետք է ենթադրել, որ Մուղնիի սարկավագը և Սիմեոն Երևանցու վարդապետը նույն անձնավորությունն է, և հնարավոր է, որ հետագայում նա լիներ Ուշիի Ս.Սարգիս վանքի առաջնորդ: Պատահական չպետք է համարել, որ Մինաս վարդապետը վանքին նվիրում է Օշականի այգին: Հետաքրքիր է նշել, որ Ուշիի վանքի Օշականի շեն այգին, 1735 թ. դեռ կար, բայց սուրբ Աթոռի ձեռքին էր: Վանքն այդ ժամանակ արդեն ամայի էր³⁸:



Նկ. 10

ԱՅՍԷՏԱՊԱՆՍԱՆԳ
 ՍՎՄԴԻԱՊԵՇՂԱԶ
 ԱԱԻՆՑԻՈՐՎԱՂՋԱ
 ՆՑԱԿ ԿՐԻՍՏՈՍ
 ԱՅԻՆ

Գրչագիր 9

Ուշիի վանքի վերջին առաջնորդներից է եղել Սարգիս վարդապետ Ղազարավանցին (ծագումով՝ Ղազարավան-Նազրվան գյուղից), որի արձանագիր տապանաքարը բացվել է կամարասրահի հյուսիսային եզրում

36 Ս ու ռ ե ն Ս ա ղ ու մ յ ա ն. Աշտարակ. Երևան, 1998, էջ 239-240: Հեղինակը գրում է, որ Մինաս սարկավագը աջակցել է Մուղնիի վանքի շինարարությանը:

37 Սիմեոն Երևանցի. Ջամբո. Վաղարշապատ, 1873, էջ 173:

38 Նույն տեղում:


(նկ. 10, գրչագիր 9):

Վերձանությունն է.

1. ԱՅՍ Է ՏԱՊԱՆ ՍԱՐԳԻ -
2. Ս ՎԱՐԴԱՊԵՏ ՂԱԶ -
3. ԱՐԱԽԱՅԻ, ՈՐ ՎԱՂԶԱ -
4. ՆԵՑԱԻ ՌՃԿԴ (1715)
5. ԹՎԻՆ:



նկ. 11



Գրչագիր 10

Վանական համալիրի արձանագրությունների հաջորդ խումբը մեծ եկեղեցուց հարավ կառուցված գավթի վիճակներն են, որոնք պահպանվել են պատերին, իսկ մի մասը գտնվել է գավթի մաքրման աշխատանքների ժամանակ:

Շատ կարևոր վկայագիր է գավթի արևմտյան մուտքի բարավորի վրայի

արձանագրությունը (նկ. 11, գրչագիր 10): Այն առաջին անգամ հրատարակել է Հովհ. Շահխաթունյանը³⁹, որից օգտվել են Ղ. Ալիշանը և Կ.Կոստանյանը⁴⁰: Վիմագիրը հրատարակել է նաև Ռ. Գասպարյանը, որը հիմնականում ընդունել է Հ.Շահխաթունյանի ընդօրինակությունը՝ կատարելով փոքր ուղղումներ⁴¹: Ներկայումս արձանագրությունն ունի հողմնադարված հատվածներ և խաթարված մասեր, որոնք առաջացել են հրացանի գնդակների հետքերից: Պետք է ենթադրել, որ Հ.Շահխաթունյանի ընդօրինակության ժամանակ վիմագիրը եղել է լավ վիճակում, որը և հավատ է ներշնչում ներկայումս դժվար ընթեռնելի մասերի նրա վերծանությունը, սակայն որոշ վերապահություններ: Բերում ենք 10 տողից վկայագրի մեր վերծանությունը:

1. ԱՅ ՈՂՈՐՄՈՒԹԲՆ ՍԲ
2. ՍԱՐԳՍԻ ԶԱԻՐԱԻԱՐԻՍ ԱԻԳԵՈՒԹԲ -
3. և ԱՇԽԱՐՀԱՅԿԱԼՈՒԹԲ և ԱՅԼՂԱՆԱՑ ⁴² -
4. և ՏԻՐՈՒԹԵ ՄԵՂԻՆՅԱՆ ԱԻԱԳ ⁴³ ՍԱՐԳՍԻ ՇԻ -
5. և ՅԱԻ ՀԱՍՏԱՄԱՅ ԱՅ ՄԵԾ ՄԱՃԱՐՍ ... Ի ԿԱԵԳԵՈՒՄՆ
6. ԽԱԽՏԵԼ ԷԿԵՂԵՑՈՅՍ, ԶՈՐ ՇԱՐԺԵԼ Ի ՀԻՄԱՆՑ: Ի
7. ՏՐ ՅՈՂԱՆԻՍԷ: Ի ՀԱԼԱԼ ԸՆՁԻՑ ԻԻՐՈՅ: ՈՐՈՒՄ ՈՂ -
8. ՈՐՄԵԱՑ Ի ՆՄԱՅ ՔՍ ՏԱՑԷ ՄԼՈՒՍ ԽԵՂԵՆ ՅԱՐԿԱՅԵ ՀՈԳՈ -
9. Յ ՆՈՐԱՅ ⁴⁴: ԵԻ ՏՐ ՀԱՄԱԶԱՍՊԱՅ: ՈՐՔ ԱՇԽԱՏԵԼՔ ԵՆ Ի ԱՄԱՅ
10. ԶԱՄԱՅԵ ՄԻԱՅԲԱՆՔ ՍԲ ՈՒԽՏԻՍ Յ ՄԵՑԵՑԷ Ի Ի ՏԵՐ, Ի ԹՎԻՍ ՉԺԳ: (1264):

Գավթի մուտքի ձախ կողմում, կամարի ստորին քարի վրա կա վարից վեր մեկ տող արձանագրություն.

ՏՐ ԱԾ ՅԱԻՏԵՆԻՑ:

Արձանագրության 5-րդ տողը Հ.Շահխաթունյանը կարդացել է ...ՀԱՍՏԱՄ ՄԵԾ ՄԱՃԱՐՍ ԱՍՏՈՒԾՈՅ..., որը Ռ. Գասպարյանը ուղղել է ...ՀԱՍՏԱՄԱՄ..., քանի որ վիմագրում ՀԱՍ-ի վրա դրված են ՍՏ տառերը: Սակայն դրանից հետո տեղադրված ԱՅ -ն իր վրա ունի պատվի նշան, որը պետք է կարդալ ԱՍՏՈՒԾՈՅ: Ենթադրվում է, որ ՄԵԾ բառից հետո պետք է լինի ոչ թե ՏԱՃԱՐ, այլ ԺԱՄԱՏՈՒՆ, որը շատ տարածված է վիմագրերում նման շինությունների անվանման համար և հարադատ է տեքստին: Ըն-

39 Հ. Շահխաթունյանց. նշվ. աշխ., էջ 119-120:

40 Ղ. Ալիշան. նշվ. աշխ., էջ 181, Կ. Կոստանյանց. նշվ. աշխ., էջ 107:

41 Ռ. Գասպարյան. նշվ. աշխ., էջ 134:

42 Հ. Շահխաթունյանի մոտ ԱՅԼ ՂԱՆԱՑՆ, ուղղումը կատարել է Ռ. Գասպարյանը:

43 Ըստ Շահխաթունյանի:

44 «ՀՈԳՈՅ ՆՈՐԱ» բառակապակցությունը բացակայում է Ռ. Գասպարյանի վերծանության մեջ:

դուռնելով հանգերձ Հ. Շահխաթունյանցի վերծանությունը, հարկ է նշել, որ տաճարը (գավիթը)⁴⁵ կառուցվել է հիմքից շարժված և խախտված եկեղեցու տեղում: Այստեղից պետք է ենթադրել, որ Ուշիում եղել է եկեղեցի, որը հիմքից քանդվել է երկրաշարժի ժամանակ: Դրա ապացույցներից է նաև այն իրողությունը, որ գավթի պատերի շաղախի մեջ նկատվել են ավելի վաղ շինությունների և խաչքարերի բեկորներ:

Արձանագրությունը թողել են Հովհաննավանքի առաջնորդներ Տեր Հովհաննեսը և Տեր Համադասպը, որոնք այդ շրջանում ճանաչված հոգևոր դեմքեր էին և հայտնի էին իրենց շինարարական գործունեությամբ: Ավագ Սարգիսը Զաքարեի թոռն է՝ Շահնշահի որդին, որի մասին մեր մատենագրության մեջ շատ սուղ տվյալներ կան: Տարօրինակ է, որ վիճադրում էի հիշատակված Վաչեի որդի Քուրդը, որի նստոցն արգեն ոչ թե Ամբերդն էր, այլ Վարդենիսը (ներկ.՝ Վարդենուտը): Պետք է ենթադրել, որ Ուշին այդ ժամանակ Ավագ Սարգսի ժառանգական կալվածքն էր, որը հետագայում նորից անցնում է Վաչուտյաններին:

ԹՎ ՉՀԸԿԱԼԷՆԱԿԻՆԱՅԵՈՂՆԵՐՈՒԹՊԱՌՆՔԻԴԻՆԵԻԽԱԹՈՒՆԻՆԵՍ
ՀՈՒՄԵՐՈՒԹԻՆԵՐՍԿԱՅԵԼՈՒԽՆԻՄՈՒԼՈՒԽԱԹՈՒՆԵՍԱՅԵՆԵՑԱԲԻՄ
ԶԵԼԱՅՎԱԿԻՍՏՎԱԲՄԵՐԿԱՋԱԿԱՆԻԱՅԳԻՆՄՆՄՔԵՐԴԵՐԱԾ
ԱԵՆՅԱԿԻՆՈՒՆԵՎԱԹՆԱՓՄՏՎՄՓԿԱՅԻՆՈՒՅՄԵՐԱՐԵԻՇԱՏՈՒԹԵ
ՊԱՌՆՔԻԹԵԻՆԵՆՏԻԱԹՈՒՆԵՉԳՂՆԵՍՊԱԿՄՔՄԻՍՍԱՅԱՆԻՏԱՆԻ
ՊՏԱԼԵԿԵԹԵՇԱԼԵՇՆԱԲԻՇԵՆԱԽՈՒԱՆՏԻԱԹՈՒՆԻՆԱԿՈՒՄԻ
ԻՅԻՆԱԿԻՆՈՒՆԵՐՈՒՆԿԱՆԱԿԻՆՉՔՆԱՅԻՆԱՅԻՆԱԿԻՆՉՔԻՐԳՏԱՆԵ
ԶՈՒՍՍՍՅԻՇԵՑԵՔ

Գրչագիր 11

Հաջորդ ընդարձակ վիճագիրը փորագրված է դավթի հարավային պատին, ներքուստ, լուսամուտից ձախ (գրչագիր 11): Այն թերի հրատարակել է Հ. Շահխաթունյանցը⁴⁶, որից օգտվել են Ղ.Ալիշանը և Կ. Կոստանյանցը⁴⁷: Արձանագրությունը կարդացել և հրատարակել է Ռ. Գասպա-

45 Մեզ էի հանդիպել դավթի [տաճար-ժամատուն] նույնացումը: Մաղաքիա արք. Օրմանյանը շատ հստակ տարբերակում է դրանք՝ համարելով դավթը տաճարից պատով և դռնով բաժանված մասը. տե՛ս Միսական բառարան. Երևան, 1992, էջ 65-66, 81, 123: Վիճագրերում դավթը հիշատակվում է նաև «տուն աղաթից» ձևով: Տե՛ս Կ. Ղաֆաղարյան. Հաղբատ, էջ 153, արձ. 24:
46 Հ. Շահխաթունյանց. Նշվ.աշխ., էջ 119:
47 Ղ. Ալիշան. Նշվ.աշխ., էջ 181, Կ. Կոստանյանց. Նշվ. աշխ., էջ 164:

ըյանը⁴⁸, որը ճշտել է և լրացրել Հ.Շահխաթունյանցի ընդօրինակությունը: Վիմագիրը 8 տողից է, նվիրատվական բնույթի: Ներկայացնում ենք վերծանությունը մասնակի խմբագրումներով:

1. ԹՎ ՉՀԸ (1329): ԿԱՄԱԻ ԱՆՄԱՀԻՆ ԱՅ ԵՒ ՈՂՈՐՄՈՒԹԼԲՂ
- ՊԱՐՈՆ ՔՐԴԻՆ ԵՒ ԽՈՒԱՆՏԻ ԽԱԹՈՒՆԻՆ, ԵՍ
2. ՀՈՌՈՄ ԵՐԵՅ, ՈՐԴԻ ԱԲՐԱՀԱՄԱՅ ԵՒ ԱՄՈՒՍԻՆ ԻՄ
- ՈՒԼՈՒԽԱԹՈՒՆ ՄԻԱՅԲԱՆԵՑԱՔ ՄԲ
3. ԶԱԻՐԱՅՎԱՐԻՍ, ՏՎԱՔ ՄԵՐ ՀԱԶԱՐՄԱՆԻ ԱՅԳԻՆ, ՈՐ ՆՈՐՔ
- ԷՐ ԴՐԱԾ Ի
4. ԶԱՐԵՈՅ ԱՌՎԻ ՀՈՂՆ ԵՒ ՎԱՌ ՆԱՓՈՐՏ ՎՍ ՓՐԿՈՒԹԵ
- ՀՈԳՈՅ ՄԵՐ ԱՐԵԻՇԱՏՈՒԹԵ
5. ՊԱՐՈՆ ՔՐԹԻՆ ԽՈՒԱՆՏԽԱԹՈՒՆԻՆ ԵՒ ՉՐՔԻՆ ԵՒ
- ՍՊԱՍԱԻՈՐՔՍ ԽՈՍՏԱՑԱՆ Ի ՏԱՐԻՆ: Դ:
6. ՊԱՏԱՐԱԳ ԱԻԱԳ:Ե: ՇԱԲԱԹԻՆ: Ա: ՔՐԹԻՆ: Ա:
- ԽՈՒԱՆՏԽԱԹՈՒՆԻՆ: Ա: ՀՈՌՈՄ ԻՐ-
7. ԻՑԻՆ: Ա: ՈՒԼՈՒԽԱԹՈՒՆԻՆ: ԿԱՏԱՐԻՉՔՆ ԱՀ ՆԻՆ ԱՅ,
- ԽԱՓԱՆԻՉՆ ԶԻՐ ԳՏԱՆԷ:
8. ԶՈՒՍՍ ՅԻՇԵՑԷՔ:

Հիմնականում համաձայնվելով Ռ. Գասպարյանի վերծանության հետ, միայն մի դիտողություն ունենք այն մասին, որ Խուանտխաթուն, Ուլուխաթուն բաղադրյալ անձնանունները պետք է զրվեն միասին: Այս խնդրին ժամանակին անդրադարձել է Ս. Ավագյանը, որը միջնադարյան վկայագրերում հանդիպող նման անձնանունները դիտել է իբրև ամբողջական բաղադրություն⁴⁹:


Հ. Շահխաթունյանցը իր գրքում ներկայացնում է արձանագրության մի հատված՝ ԹՎ. ՉՀԸ(1329) ԿԱՄԱԻ ԱՆՄԱՀԻՆ ԱՍՏՈՒԾՈՅ ԵՒ ՈՂՈՐՄՈՒԹԵԱՄԲ ՊԱՐՈՆ ՔՐԴԻՆ, ԽՈՒ..., նշելով նրա տեղը եկեղեցու հարավային մուտքի բարավորին: Սակայն վկայագիրը կրկնում է գավթի հարավային պատի արձանագրության սկիզբը: Այդ իսկ պատճառով մեղ թվում է, որ այստեղ ինչ-որ անճշտություն կա, որը տեղ է գտել նաև հետագա հրատարակիչների մոտ: Ընդհանրապես, եկեղեցու հարավային մուտքը քանդված է եղել երկրաշարժից, և նրա բարավորը չի պահպանվել, իսկ գավթի և եկեղեցու պեղումների ժամանակ բարավորի քար (կամ քարեր) չեն հայտնաբերվել, առավել ևս արձանագրված: Մեծ եկեղեցու արևմտյան շքամուտքի մուտքերում գտնվել են բեկորներ, վրան փորագրված առանձին մեծ տառեր կամ տառակապակցություններ, որոնք չեն ամբողջանում: Ենթադրվում է, որ այն կարող է լինել արևմտյան մուտքի բարավորի արձանագրությունը, գուցե և շինարարական:

Գավթի արևելյան պատին ագուցված խաչքարի պատվանդանին փորագրված է արձանագրություն (6 տող): Վիմագիրը հրատարակել է Ռ.

48 Ռ. Գասպարյան. նշվ. աշխ., էջ 133:

49 Ս. Ավագյան. նշվ. աշխ., էջ 32-33:

Գասպարյանը⁵⁰ (նկ. 12, գրչագիր 12):



Նկ. 12

ՇՆՄՂԻԷՔԻԵՍՏԻԿՆԱՅ
 ՍԿԱՆԳՆԵՑԻՕՒԱՂՍԲ
 ԿՈՒԹԵՆԼՆԻԱՂԱՍՐՈ
 ԵՍԹԻԼԵՐՆԵԳԻԳՈՈ
 ՈՐԲԿԱՐԴԵՑԻՇԵՑԷ
 ՔԻ ՔՍ

Գրչագիր 12

1. ՇՆՈՐՀԻԻՆ ՔԻ, ԵՍ ՏԻԿՆԱՅ-
2. Ս ԿԱՆԳՆԵՑԻ ՁԽԱՂՍ ՓՐ-
3. ԿՈՒԹԵՆ ԼՆԳՈ ԽԱՂԱՍՐՈ
4. ԵՒ ՍԹԵՒ ՄԱԻՐՆ ԵՒ ԳՐԻԳՈՐՈ.
5. ՈՐԲ ԿԱՐԴԵՑ ԶԻՇԵՑԷ-
6. Ք Ի ՔՍ :

Վիճագրում մեր միակ ուղղումը ՏիկնԱՅ-ն է (և ոչ թե Տիկնայս, ըստ Ռ. Գասպարյանի): Տիկնանց անունը, ինչպես նշեցինք, վկայված է 1310թ. հիշատակարանում և Մամախաթունի մայրն է: Մեզ թվում է, որ այս և եկեղեցու հարավային պատի 1303թ. վիճագրերի «Սիթե»-ները նույն անձնավորություններն են: Կարելի է ենթադրել, որ խաչատուրը Տիկնացի հայրն էր, Գրիգորը որդին: Տիկնանց անունով կա ևս մեկ արձանագրություն, որը գրիչը չի ավարտել (նկ. 13, գրչագիր 13): Սակայն այստեղ նրա ամուսինը Սարգիսն է, հետևարար նրանք իրար հետ ոչ մի առնչություն ունենալ չեն կարող:



Նկ. 13

50 Ռ. Գասպարյան. նշվ. աշխ., էջ 135:

ՆՈՒ ԻԿՆԱՅԵՍԱԿ ԻՍՉՐԱԾՍ ԵՒՈՒՍԻՆ ԻՄԲԿՆԱՆՑՍԱԲԱՆԵ

Գրչագիր 13

Վերծանությունն է.

1. ՄԻՆՈՐԷ ԻԿՆ ԱՅ ԵՍ ՍԱԿ-
2. ԻՍ ԶՐԱԾՍ (?) ԵՒ ԱՄՈՒՍԻՆ
3. ԻՄ ՏԻԿՆԱՆՑՍ ՄԻԱԲԱՆԵ[ՑԱԲ]..

Գավթի նույն արևելյան պատին, նախորդին ձախից կցված, ագուցված է երկրորդ խաչքարը, որի վերնամասում և կողին փորագրված է վիմագիր (նկար 14, գրչագիր 14): Ինչպես ճիշտ նկատել է



նկ. 14


ԻՍ ԱԶՍՏԵՐՈՒՆԱԿԱՆ ԱԻԳՆԱԿԱՆ ՊԱՐՈՆՎԱ

- | | |
|--------|----------------------|
| ՉԷԻ ԱՆ | 1. : ԽԱԶՍ ՏԵՐՈՒՆԱԿԱՆ |
| ԶԲՈՒԲ | ԱԻԳՆԱԿԱՆ ՊԱՐՈՆ ՎԱ- |
| ԻԿՎԱՐ | 2. ԶԷԻ, ԱՄԷՆ: |
| ԴՊԵՏ | 3. ԶԲՈՒԲ- |
| ԿԱԶՄ | 4. ԻԿ ՎԱՐ- |
| ՈՂ ՍԲ | 5. ԴՊԵՏ |
| ՆՇԱՆ | 6. ԿԱԶՄ- |
| ԻՍՅԱՂ | 7. ՈՂ ՍԲ: |
| ԱԻԹՍ | 8. ՆՇԱՆ- |
| ՅԻՇԷՑ | 9. ԻՍ: ՅԱՂ- |
| ԵՔ ԵԻ | 10. ԱԻԹՍ |
| ԱԾԳ | 11. ՅԻՇԷՑ- |
| ՁԵԳ | 12. ԵՔ ԵԻ |
| ՅԻՇԷ | 13. ԱԾ Գ- |
| | 14. ՁԵԳ |
| | 15. ՅԻՇԷ: |

Գրչագիր 14

Ռ. Գասպարյանը, հիշատակված Վաչեն՝ Սարգսի որդին է⁵¹: Հետևաբար խաչքարը և արձանագրությունը կերտվել են Քուլքիկ⁵² վարդապետի ձեռքով, հավանաբար եկեղեցու կառուցումից հետո՝ XIII դ. սկզբին և դրվել հարավային շքամուտքի աջ կողմում: Հետագայում, գավիթը կառուցելու ժամանակ, այն ագուցվել է պատի մեջ և, բնականաբար, խաչքարի կողի արձանագրությունը փակվել է:

Հաջորդ երկու ընդարձակ արձանագրությունները փորագրված են գավթի կամարների 4 քարի վրա: Վիճագրերը նվիրատվական են: Դրանցից մեկը՝ Քեղուտենց Սարգսի որդիներ Հասանի և Խուրթի 19 տողից վկայագիրն է (նկ. 15, գրչագիր 15): Ըստ երևույթին, Նուրծիհանը և



Նկ. 15

ԿԱՄԱԼԱՅԵՍԱԿԱ
ԱՆԵԵՂԲԱՅՐԻՄԻՈ
ԻՐԱՍԻՐԴԻՔԱԿՄԵ
ԵՂՈՒՍԵՆՑԻԿԱՆԵ
ՑԱՔԻԶԱԿԱՎԱԿԱ
ԵԳՆԵՑԱԲԶԴԱԿԱ
ՑԿՈՂՆՅՈՐԴՈՎԱ
ՄԻՆԻ Ո՞՞՞ ՆԵ
ԵՑԱՔԱՅԳԻԵՏԿԱ
ԻՄԶԱԿԱՎԱԿԱՍԵՄԵ
ՔԱՆՈՒՍԱՑԱՆԻՍ
ՔԻՆԸ: ԱՐՁԱՄԻՔՆԻ
ՄՆԸՆԴԱԴԱՋԻՆԻ:
ՀԱՍԱՆԱԲԻՈՒՐԶ
ԻՆԻ: ՆՈՒՐՃԻՀԱՆԻՆ
: ԲԻՈՒՐԸԼԻԻ ԱԶ
ՈՒՆԻՆ: ԱԵՏԵՑ
ՆՈՎԻԱՓԱՆԵ ԴԱ
ՐԻՑԱՅ Գրչագիր 15

51 Նույն տեղում, էջ 135:

52 Նատ Հազվադեպ անձնանուն, վկայված է մեկ անգամ ՔՈՒՔ ձևով Վանստանի վանքի վիճագրերում: Տե՛ս Ash. Kalantar. The Mediaeval Inscriptions of Vanstan, Armenia. Paris, 1999, 15:

Խուժվում են նրանց կողակիցներն են: Արձանագրությունը հրատարակված է⁵³ ճիշտ վերծանությունը: Այն ներկայացնում ենք փոքր ուղղումներով:

- | | |
|------------------------------|-------------------------------|
| 1. ԿԱՄԱԻՆ ԱՅ ԵՍ ՀԱՍ - | 11. ԱՆՔՍ ԽՈՍՏԱՅԱՆ Ի ՏԱ - |
| 2. ԱՆ ԵԻ ԵՂԲԱՅՐ ԻՄ ԽՈ - | 12. ՐԻՆ: Ը: ԱԻՐ ԺԱՄ Ի ՏԱԻՆԻ - |
| 3. ԻՐԹՍ ՈՐԴԻՔ ՍԱՐՔՍԻ Ք - | 13. ՏՆ ԸՆԴԱՌԱՋԻՆ: Բ: |
| 4. ԵՂՈՒՏԵՆՑ ՄԻԱԲԱՆԵ - | 14. ՀԱՍԱՆԱ: Բ: ԽՈՒՐԹ - |
| 5. ՑԱՔ ՍԲ ՋԱԻՐԱՎԱՐԻՍ | 15. ԻՆ: Բ: ՆՈՒՐՃԻՀԱՆԻՆ |
| 6. ԵԻ ԳՆԵՑԱՔ ՋԴԱՐԵՆ - | 16. Բ: ԽՈՒԹՂՈՒԽԱԹ - |
| 7. Ց ՀՈՂՆ ՅՈՐԴՈ ՍԱԻ | 17. ՈՒՆԻՆ: Ա: ԱԻՏԵՑ - |
| 8. ՏԻՆԻ(?):Ո:ՍՊ Ն ԵԻ - | 18. Ն: ՈՎ ԽԱՓԱՆԷ ԴԱ - |
| 9. ՏՆԿԵՑԱՔ ԱՅԳԻ ԵԻ ՏՎԱՔ | 19. ԿԻ ՅԱՅ : |
| 10. Ի ՍԲ ՋԱԻՐԱՎԱՐՍ ԵԻ ՄԻԱԲ - | |


Անհասկանալի է 7. և 8 տողերի բառակապակցությունը, որը մենք վերծանել ենք՝ ՅՈՐԴՈՍԱԻՏԻՆԻ: Ո: ՍՊԻՏԱԿՆ ԵԻ⁵⁴: Այսինքն՝ զնված է Դարենց հողը 1000 արծաթով, որը պատկանել է Հորդոսավտինին(?) և տնկվել է այգի և տրվել Ս. Ջորավարին:

Երկրորդ արձանագրությունը (14 տող) փորագրված է ևս երկու քարերի վրա:⁵⁵ Այն ունի հետևյալ բովանդակությունը (նկ. 16, գրչագիր 16):

- | | |
|-----------------------------|-----------------------|
| 1. ԿԱՄԱԻՆ ԱՅ ԵՍ ՏՐ | 8. ԺԱՄ Ի ՏԱԻՆԻ ՍԲ ՅԱ- |
| 2. ՅՈՒՍԵՓՍ ՄԻԱԲԱ- | 9. ԿՈՐԱՅ: Բ: ԱԻՐՆ Ի- |
| 3. ՆԵՑԱ ՍԲ ՋԱԻՐԱՎԱ- | 10. ՆՁ: Բ: ԻՄ ՀԱԻՐ- |
| 4. ՐԻՍ ԵԻ ԷՏՈՒ ՄԵՐ (?) ԱՅԳԻ | 11. Ն ՍԱՐԳՍԻ: Բ: ԻՄ |
| 5. Ն ՅԱԻՇԱԿԱՆ ԵԻ ՄԻ- | 12. ՄԱԻՐՆ ԾԱՄԿԱՆ- |
| 6. ԲԱՆՔՍ ՀԱՍՏԱՏ]- | 13. Ն: ՈՎ ԽԱՓԱՆԷ Դ - |
| 7. ԵՅԻՆ Ի ՏԱՐԻՆ: Ջ: [ԱԻՐ] | 14. ԱՏԻ ՅԱՅ : |

Վիճաբարի 4-րդ տողի էՏՈՒ ՄԵՐ ԱՅԳԻ բառակապակցությունը թեական է, սակայն մենք այդ վերծանությունը տվել ենք տեքստի բովանդակությունը համապատասխան: Տեր Հուսեփը Ուշիի վանքի միաբան է և նվիրել էր Օշականի սեփական այգին, որի դիմաց պատարագ է ստացել իր և ծնողների հոգու վրկություն համար:

53 Ո. Գասպարյան. նշվ. աշխ., էջ 135:
 54 Ո. Գասպարյանի հղվածում այս տողերը վերծանվել են «... ՅՈՐԴՈ ՍԱՀՄԱՆԵՑԱՆ Ի ՏԱՐԻՆ... Ո ՍՊ ԳՆԵՑԱՔ...», որը վկայագրի տողերի տառերի քանակին չի համապատասխանում:
 55 Ո. Գասպարյանը հրատարակել է այս արձանագրության միայն երկրորդ քարի հատվածը, որը սկսվում է 6-րդ տողից:



Նկ. 16

ԿԱՄԱՆԱՅԵՍՏՐ
 ՅՈՒՍԵ ՄԱԲԱ
 ՆԵՅԱՄՔ ԱՐԱՎՈ
 ՐԻՍ ԱՅԳԻ
 ՅԱ ԱԿԱՆԵԻ
 ԱԲԱՆՔՍԱՆՍ
 ԵՑԻՆԻՍԱԻՆՁ
 ԺԱԽՄԱՆԻՍԲՅԱ
 ԿՈՒԱՅԻՄԱՐՆԻ
 ՆՁԻՄԿԱՐ
 ՆՍԱԲՄԻՖԻՄ
 ՄԱՐՆԾԱԿԱՆ
 ՆՈՎԻԱՓԱՆԷԴ
 ԱՄԻ ՅԱՅ

Գրչագիր 16

Հաջորդ արձանագրությունը բացվել է գավթի կամարներից մեկի՝ հյուսիս-արևելյան որմնամուկի մաքրման ժամանակ, եկեղեցու հարավային շքամուտքից աջ: Վիմագիրը (12 տող) նվիրատվական է և հրապարակվում է առաջին անգամ (գրչագիր 17):

Արձանագրության վերձանությունն է.

- | | |
|-------------------------|---------------------------------|
| 1. ԿԱՄԱՆ ԱՅ ԵՍ ՉԱՐՈՒԿ - | 7. ՈՍՏԱՅԱՆ Ի ՏԱՐԻՆ |
| 2. Ս ՄԻԱԲԱՆԵՑԱՅ ՄԲ ՉԱ - | 8. Դ: ԱԻՐ ԺԱՄ Ի ՏԱԻՆԻ ՄԲ ՍԱՐ - |
| 3. ԻՐԱՎԱՐԻՍ ԵԻ ՏՎԻ ՉԻՄ | 9. ԳՄԻ: Ա: ԻՄ ՀԱԻՐՆ ՍԱՐԳԱԻ |
| 4. ՀԱՅՐԵՆԻ ՀՈՂՆ Չ - | 10. : Ա: ԻՄ ՄԱԻՐՆ ԱՀՄԼՔԻՆ: Ա: |
| 5. ԽՈՍՈՆՉՆՈՒ : ԵՃ: | 11. ՀԱԲԷԼԻՆ: Ա: ՅՈՐՈՍՆՈՒՆ: ԿԱ - |
| 6. ՄՊ ԵԻ ՄԻԱԲԱՆՔՍ Խ - | 12. ՏԱՐԻՉՔՆ ԱԻՐՀԵՆԻ ՅԱՅ : |

Վիմագրի 5-րդ տողի *ԽՈՍՈՆՁՆՈՒ* տեղանունը թեական է և կարող է այլ կերպ ընթերցվել: Հորոսնու անձնանունը վիմագրերում հանգիպում է առաջին անգամ:

Հետաքրքիր է նշել այն փաստը, որ Ուշիի վիմագրերում բազմիցս հանդիպում է Սարգիս անձնանունը: Եկեղեցու և գավթի պատերին նույնիսկ, գրանք փորագրված են առանձին: Կարելի է ենթադրել, որ Ս. Սարգիս Ջորավարին նվիրված սրբավայրերի նկատմամբ Սարգիս անունով անձինք հատուկ վերաբերմունք են ունեցել, հիշատակելով իրենց կամ իրենց ծնողների անունները:

Նվիրատվական է նաև գավթի պեղումներից բացված երկու շինաքարի վրա փորագրված 5 տողից վիմագիրը (նկ. 17, գրչագիր 18):

Վիմագրի երկրորդ տողի *ՏՆՈՐԵՑԻ* բառը սկզբնապես փորագրված է եղել *ՏՈՒԵՑԻ*: Հետագայում *Տ*-ի և *Ո*-ի միջև ավելացվել է փոքրիկ «ն»: Ըստ երևույթին պետք է հասկանալ, որ տեղ Սարգիսը միաբանելով Ս. Ջորավարին՝ տնօրինել է Փարպիի այգին՝ վանքին նվիրաբերելու համար:

ԿԱ ԱՆ ԱՅԵՍԱՐՈՒԿ
ՍՄԱԲԱՆԵՑԱՅՄԲՁԱ
ԻՐԱԿԱՐԻՍԵՏՎԷԶՄ
ՀԱՅՐԵՆԻ ՀՈՂՆՁ
ԽՈՍՈՆՁՆՈՒ ԵՃ:
ՄՊԵՄԱԿԱՆՔՄԻ
ՈՍՏԱՑԱՆԻ ՏԱԻՆ
Ի՛Դ ԿՐԺԱԿԵՆԵՄԵՍԱՐ
ԳԻՒԿԻՄԸԱՐՆՍԱԳԻ
ՎԻՄԱԿԱՆ ԱՅՄԷԿԱ
ՀԱԵԷՆՎԱՅՄՈՍՆՈՒԿԱ
ՏԱԿՐՔԱԿԱՆՆԵՅԱՅ

Գրչագիր 17



Նկ. 17

ԵՍՍԱՐԳԻՍՄԻԱԲԱՆԵՑԱՍԻ
ԲՈՅՍԵԻՋՈՒԹՅԱՅԳԻՓԱՊԻ
ԵԻՄԻԱԲԱՆՔՄԻ ՈՍՏԱՑԱՆ
ԻՍԿԱՐԻՆ Ի՛Դ ԿՐԺԱԿԵՆԵ
ԱՆՎԱԿԱՆ ՊՓԱՓԱՆԷՄԻՆԱՅ

Գրչագիր 18


Վերծանությունն է.

1. ԵՍ ՍԱՐԳԻՍ ՄԻԱԲԱՆԵՑԱ ՍՐ -
2. ԲՈՑՍ ԵՒ ՏՆՈՐԵՑԻ ԱՅԳԻ Ի ՓԱՐՊԻ
3. ԵՒ ՄԻԱԲԱՆՔՍ ԽՈՍՏԱՑԱՆ
4. Ի ՏԱՐԻՆ: Բ: ԱԻՐ ԺԱՄ Ի ՏԱԻՆԻ
5. ԱՆՏՈՆԻ: ՈՎ ԽԱՓԱՆԷ ԴԱՏԻ ՅԱՅ :

Ընդարձակ արձանագրություն է (13 տող) փորագրվել գավթի արևելյան մուտքի ճախ կամարի և կից շինաքարերի վրա (նկ. 18, գրչագիր 19): Վիճագրի վերին մի քարը պահասում է, իսկ բուն արձանագրության առաջին 8 տողերի շատ հատվածներ հողմնահարված են: Լիարժեք վեր-



Նկ. 18



Գրչագիր 19

ծանվում են միայն վերջին հինգ տողերը: Վկայագիրը հրատարակել է Ռ. Գասպարյանը, որը փորձել է վերականգնել եղծված մասերը⁵⁶: Հիշատակությունը թողել են Գոհար տիկինը և իր ամուսինը (անունը չի կարգացվում), որոնք մեծ նվիրատվություն են կատարել վանքին դիմացը Վարդավառի տոնին սլատարագներ ստանալով: Մեր վերծանությունը արձանագրությունը կարգացվում է հետևյալ կերպ.

56 Ռ. Գասպարյան. նշվ. աշխ., էջ 135:

1. [ԿԱՄԱԻՆ ԱՆՄԱՂԷԻՆ ԱՄՅ ԵՍ]
2.Ս ՇԵՈՂՍ ԵՒ ԱՄ-
3. [ՈՒՍԻՆ ԻՄ ԳՈՂԱՐ ՏԻԿԻՆ ՄԻԱԲ -
4. ԱՆԵՑԱՔ ՍԲ [ԶՂՈՐԱՎԱՅ-
5. [ՐԻՍ]...ԿԱՆԻ.....
6.ՆԱՓՈՐՏ ՈՐ Չ
7.ՈՍԿԵԱ ԵՒ ԸՆՊԱՆԱԿ
8.ԻՆ ԵՒ ԽՐԹԻՆ ԵՒ
9. ՄԻԱԲԱՆՔՍ ԽՈՍՏԱՑԱՆ
10. ՊԱՏԱՐԱԳ Ի ՏԱԻՆԻ ՎԱՐԴԱՎ -
11. ԱՌԻՆ ՅԱՆՈՒՆ ԳՈՂԱՐ
12. ՏԻԿԻՆ Ա: ԿԱՏԱՐԻՉՔՆ ԱԻՐՀ -
13. ՆԻՆ ՅԱՅ

Գոհար տիկինը վկայված է գավթի սրբատաշ, խաչաքանդակ քարերից մեկի վրա, որը գտնվել է սլեդուժների ժամանակ (նկ. 19, գրչագիր 20): Արձանագրութունը (6 տող) փորագրվել է խաչից ձախ՝ հետևյալ բովանդակությամբ.



ԳՈՂ
ՏԻԿԻՆ
ՅԱՂԱԻ
ԹՔՅ
ԻՇԵ
ԴԻՔ

1. ԳՈՂ[ԱՐ]
2. ՏԻԿԻՆ
3. ՅԱՂԱԻ
4. ԹՔՅ-
5. ԻՇԵ -
6. ՑԷՔ:

Նկ. 19 Գրչագիր 20

Վերջին երկու արձանագրութունները ցույց են տալիս, որ Գոհար տիկինը կարևոր դեր է խաղացել Ուշիի վանքին սատարելու գործում: Փաստորեն նման նվիրատվութուններ միաբանությանը կարող էին անել մեծահարուստ մարդիկ կամ իշխանական տան ներկայացուցիչներ: Այս առումով կարելի է ուղիղ համեմատութուն կատարել Գոհար տիկնոջ և Հովհաննավանքում հիշատակված Գոհար Մլքեի միջև⁵⁷: Այդ նույն վիճակագրում հիշատակվում է նաև Խուրթը, որն ավելի քան ամրապնդում է

⁵⁷ Կ. Ղ ա Ֆ ա դ ա Ր յ ա ն. Հովհաննավանքը և նրա արձանագրութունները, էջ 104:

մեր տեսակետն այս հարցում: Կ. Ղաֆաղարյանը Հովհաննավանքի հիշյալ արձանագրությունը համարում է 1288թ. փորագրված, որը կարծես թե համընկնում է Քրդի որդիներից մեկի՝ Տայիրի իշխանության տարիներին: Իսկ Տայիրը փոխարինել է Հասան եղբորը⁵⁸ և, հավանաբար, Անբերդ գավառի տերն էր մինչև XIV դ. սկիզբը: 1303 թ. արդեն հիշատակվում է Տայիրի որդի Քուրդը (տե՛ս ներկա հոդվածում եկեղեցու հարավային պատի արձանագրությունը): Ի վերջո կարելի է ենթադրել, որ Գոհար տիկինը եղել է Տայիրի կինը, որն ունեցել է երկու զավակ՝ Խուրթին և Քուրդին (Քուրդ Բ)՝ Չրքինի հայրը:

Այս իրողությունն ավելի քան ամրապնդվում է հաջորդ արձանագրության քննարկմամբ: Վիմագիրը, որը գրվել է 4 քարի վրա (պահպանվել են երեքը) փորագրված է եղել հավանաբար գավթի հարավային պատի ճակատին: Փորագրված արձանագիր քարերը գտնվել են այդ հատվածում, իսկ երրորդ քարը, ընդհանրապես, հարավային կամարագարդ շինությունից (նկ. 20, գրչագիր 21):




Նկ. 20

Վիմագրից երևում է, որ այն թողել է Քուրդ Ա-ի որդիներից մեկը, որի ամուսինը եղել է Գոհարը: Հովհաննավանքի 1283 թ. արձանագրությունում Քրդի Հասան որդին իր «հայրենիքը և ղավակներին» ավանգում է եղբորը՝ Դավթին⁵⁹, այսինքն՝ տիրակալական իրավունքն անցնում է վերջինիս: Սակայն XIII դ. վերջից կամ XIV դ. սկզբից Վաչուտյանների իշխանությունը գլխավորեց Քուրդ Բ Անբերդցին՝ Տայիրի որդին և ոչ թե Հասանի կամ Դավթի ժառանգորդները: Կարելի է եզրակացնել, որ XIII դ. վերջին, գուցե և մահացած Դավթին փոխարինել է Տայիրը շատ կարճ ժամանակով:

58 Վերջին անգամ Հասանը հիշատակվում է 1283 թ. Հովհաննավանքի մեծ տաճարի վիմագրերից մեկում:

59 Կ. Ղ ա ֆ ա ղ ա ղ ա ն . Հովհաննավանքը և նրա արձանագրությունները, էջ 106:



Գրչագիր 21

Ներկայացնում ենք վիճագիրը (5 տող) վերծանությամբ:

1. [ՈՐ]ԴԻ ԻՇԽԱՆԻ ՔՐԴԻ [ԵԻ]ԹՈՌՆ ՄԵԾԻՆ ՎԱԶԷԻ ԵԻ Ի
2. ՍԻՐԵԼԻ ՄԱԻՐ ԽՈՐԻՇԱՀԻ ԴՍԵՐ ՄԱՐԾՊԱՆԱ ՅԱԶԳԷ ՄԱՄԻ -
3. [ԿՈՆԵԱՑ] ... ՓՈԽԵՑԱՔ ԱՐՁ (?) ԱՆՍ ԵԻ ԱՄՈՒՍԻՆ ԻՄ ԳՈՀԱՐ
4. [ՏԻԿԻՆ]... ՄԵՐ ԶԱԽԱԿ ՅԵՏ ՄԵՐ ԵԻ ԾՆՈՂՔԻՍ ՇԻՆԵ-
5. [ՑԱՔ] ... ԾԻՑ ՍՐԲՈՑ ... ԱՐՁԱՆ ԱՌ ԱԾ ԵԻ Փ...

Վերջին տողում ԱՐՁԱՆ բառը բերված է արձանագրության իմաստով: Այն շատ հաղվագեպ է հանգիպում վիճագրերում: Վիճագիրը հետաքրքիր է այն իմաստով, որ այստեղ խոսքը վերաբերում է ինչ-որ կարևոր կառույցի շինարարության, որը կատարել են Վաչուտյանները: Հուսանք, որ հետագա պեղումների ժամանակ կգտնվի արձանագրության սլակասող առաջին հատվածը:

Բացի քննարկված վիճագրերից, Ուշիի վանքի որմերին, ինչպես նաև պեղումներից, առկա են մի քանի տասնյակ այլ արձանագրություններ, որոնք հողմնահարված են՝ բեկորային և թերի: Դրանք կարոտ են տևական ուսումնասիրության:

Քննարկված հիշատակագրերը լրացուցիչ տվյալներ են ընձեռում Վաչուտյանների իշխանական տան, վանքի պատմության, սոցիալ-հասարակական, իրավական հարաբերությունների վերաբերյալ և աղբյուրագիտական կարևոր նշանակություն ունեն:

* Հեղինակները իրենց շնորհակալությունն են հայտնում Հնագիտության և ազգագրության ինստիտուտի ավագ գիտ. աշխատակիցներ Գագիկ Սարգսյանին և Հուսիկ Մելքոնյանին արձանագրությունների ընթերցման ժամանակ մասնագիտական խորհրդատվություն անելու համար: Արձանագրությունների գրչանկարները կատարել է ինստիտուտի վիճագրության բաժնի աշխատակից Լևոն Ավագյանը:

ЭПИГРАФИЧЕСКИЕ НАДПИСИ МОНАСТЫРЯ
СВ. САРГИСА В УШИ

ФРИНА БАБАЯН, АРАМ КАЛАНТАРЯН

Р е з ю м е

Во время археологических работ 1999–2000 гг. в монастырском комплексе Св. Саргиса в Уши были выявлены многочисленные эпиграфические надписи, которые частично сохранились на стенах и на отдельных камнях разрушенных землетрясением 1827 г. церкви и притвора. Представленные 26 надписи (из них впервые публикуются - 19) дают богатый материал для освещения истории монастыря, княжеского рода Вачутянов, а также ряда вопросов социально-экономического уклада средневековой Армении.

EPIGRAPHIC INSCRIPTIONS OF ST. SARGIS MONASTERY OF USHI

FRINA BABAYAN, ARAM KALANTARYAN

S u m m a r y

During 1999-2000 archaeological works in St. Sargis monastery complex of Ushi were revealed numerous epigraphic inscriptions, which remained only partly intact on the walls and on separate stones of the church and parvis, destroyed by the earthquake of 1827. The inscriptions presented (26 on the whole, 19 of which are published here for the first time) give a rich material for elucidation of history of the monastery and Vachutyán lord family, as well as for the questions of social-economic character of medieval Armenia.